

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 86-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ ԱՆ

----- 2021 թվականի ----- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 86-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի «**Եվրասիական տնտեսական միության (Մաքսային
միության) տեխնիկական կանոնակարգերով նախատեսված
համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական
ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող
լիազոր մարմին սահմանելու մասին**» N 86-Ա որոշման (այսուհետ՝
Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.
 - Որոշման 1-ին կետում «լիազոր մարմին» բառերից հետո լրացնել
«(այսուհետ՝ Լիազոր մարմին)» բառերը:
 - Որոշման 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1 կետ՝ հետևյալ
խմբագրությամբ. «1.1 Սերիական թողարկման արտադրանքի համար
ժամանակավոր միջոցառումների կիրառմամբ Եվրասիական
տնտեսական միության համապատասխանության գնահատման
մարմինների միասնական ռեեստրում ներառված սերտիֆիկացման
մարմինները համապատասխանության սերտիֆիկատների վերաբերյալ
եռամսյակային տեղեկատվությունը տրամադրում են Լիազոր
մարմնին:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը: